Իրանական են նմանապէս Մասիս եւ Նպատ (Ալա-Դաղ) լեռնանունները:

Մասիս անունն էին կրում հնումը ոչ միայն Արարատը (Ադամն Մասիս), այլ եւ Սիփանը եւ Տիգրանակերտից հիւսիս տարածուող բարձր լեռնաշղթան:

Թէ ո՛րքան հնուց էին իրանցիք ապրում Մասիսի ստորոտներին, այդ երեւում է այն առասպելից եւս, համաձայն որի Աժդահակը այդ լերան վրայ է շղթայուել. մի առասպել, որ յետագային փոխանցուեց Անտոնիոս եռապետի ձեռքով դաւաճանօրէն ձերբակալուած եւ Ալեքսանդրիա տարուած Արտաւազդ թագաւորի անձնաւորութեան:

Երասխի հիւսիսակողմը (նստած իրանական հին բնակչութեան մի մնացորդ պահուել էր դեռ մինչեւ Ե. դարը: Դա այն ժամանակ այսպէս կոչուած «մարաց աշխարհն» էր, Նախիջեւանի մօտ գտնուող մի դաւառ, Գողթնից արեւմուտք: Այդ դաւառի բնակիչները քրիստոնէական շրջանում էլ կառչած էին մնում իրենց հին դեւերին ու շատ կոտրտուած խեղճ հայերէն էին խօսում:

Նպատ անունը եւս ամենասերտ կերպով կապուած է իրանցիների կրօնական հաւատալիքների հետ:

Իրանական են նաեւ Բագրեւանդ, Բագաւան անունները: Բագաւանը, այսինքն՝ Բագա-ի (հին պարսկ.) աւանը պարսից ժամանակ կենտրոնն էր Միթրայի (Միհր), որ այդտեղ, ինչպէս նաեւ պարսիկների մօտ, պաշտուում էր Բագա անուան տակ, որ նշանակում է «առատարաշխ»:

Հայերէնի մէջ այդ բառը յետոյ նոյնիմաստ վանատուր ձեւով շարունակուեց պահուել, որ ասել է հիւրընկալ, օթեւանող:

Այս եւ հայկական ուրիշ լեռների ու դեռերի իրանական անունները ցոյց են տալիս, որ իրանցի կամ իրանականացած վաչկատուն խաշնարածներ ամառ ժամանակ իրենց հօտերով Հայաստանի ալպեան արօտատեղիներն էին չուում:

Նոյն պատճառով հասկանալի է դառնում նաեւ այն, որ իրանցիք հնումը իրենց բնակութեան տեւական հետքերը չեն թողել այդտեղ:

* * *

Բացի իսկական (իրանցիներից՝ հայ-մարական սահմանամերձ լեռներում թափառում էին աւազակաբարոյ-վաչկատուն ուրիշ ցեղեր եւս, որոնց ցեղային պատկանելիութիւնը դժուար է որոշել: Դրանց թւում ամենից առաջ յիշատակել պէտք է՝ Ամարդներին կամ Մարդերին եւ Kurtioi: Պարզուած չէ տակաւին, թէ արդեօք դրանք սկզբից իսկ վաչկատուն իրանակա՞ն ցեղեր են, թէ՞ նախաբիական վաչկատուններ, որոնք յետագային են միայն խառնուել իրանցիների հետ եւ իրանականացել:

«Մարդ» անունը իրանական հայհոյանք է, նշանակում է՝ «քանդիչ, վնասող»: Ինչ եւէ, սկսած այն ժամանակից (Ե. դ. Բ. Ա.) երբ մենք պատմական տեղեկութիւններ ունինք, մարդերը գոնէ Մարաց աշխարհում եւ Պարսում յայտնի էին որպէս այլասերուած իրանցիներ: Հայաստանում այդ անունը բոլորովին անծանօթ էր դրերի դիւտի ժամանակ, նոյնը նաեւ՝ միջին — պարսկական եւ արաբական դպրութեանց մէջ: Այդտեղ նա փոխարինուել է ցեղային հնագոյն՝ Kurtioi անուանը համապատասխան fուրդ կամ աւելի հին՝ քուրտ անուանակոչումով:

Այս բանի դիտակցութիւնը պահպանած են եղել յետագայի քրդերը եւս:

Այսպէս, արաբացի ճամբորդ ալ-Մասուդի դեռ 10-րդ դարում տեղեկացել է քուրդ ցեղաբաններից, թէ քրդերի նախահայր Քուրդ-ը եղել է Մարդ-ի որդին:

«Մարդ»երի անունը Հայաստանում շարունակեց ապրիլ — դպրութեան շրջանում — իբարուց հեռու գտնուող երկու դաւառանուններ-ի մէջ — «Մարդաստան» — Վասպուրականում եւ «Մարդալի» — Տուրուբերանում:

Յետագայի ուրիշ աղբիւրներ, որոնք մեզ տեղեկութիւն են տալիս մարդերի կամ քրդերի առաջխաղացման մասին Հայաստանում, մեզ տանում են դէպի Վանայ լճի հարաւ-արեւելակողմը, որ յետոյ Անձեւացիք, Անձեւացեաց դաւառ կոչուեց — Մոկքից արեւելք եւ Կորդուքից հիւսիս արեւելք եւ Բոհտան գետի ակունքների մօտ:

Անձեւացեաց դաւառը, որ նշանակում է «անձաւների, քարանձաւների աշխարհ», արաբերէն (քրդերէնից առած) az-Zavazan սկսած առնուազն հելլենական ժամանակներից՝ վի-